Արձանագրություն N 2

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար կրծողների և մակաբույծների ոչնչացման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-24/6 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19

05 մարտի 2024թ.
ժամը՝ 15.00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Հարությունյան
Հանձնաժողովի անդամներ՝ Լ.Լևոնյան, Վ.Թորոսյան, Ա.Լալայան, Լ.Կուրղինյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Սաղաթելյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված գնման գների վերաբերյալ

Չափաբաժնի համարը	***Չափաբաժնի անվանումը***	***Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)***
1	ախտահանման – մակաբույծների ոչնչացման ծառայություններ	170000
2	ախտահանման – մակաբույծների ոչնչացման ծառայություններ	79998

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 01.03.2024թ.-ին ժամը 15:00-ին:

էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 04.03.2024 թ.-ին ժամը 15:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Գործունեության հասցեն	Կապի միջոցներ	Էլ. հասցե
1	«ԵրՄիք» ՍՊԸ	ք.Երևան Զավարյան 43	010540795	ermik50@mail.ru
2	«Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ	ք. Երևան, Մովսես Խորենացի 160	010573590	desinfection.c@mail.ru

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-24/6 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Հ/Հ	Մասնակից	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	«ԵրՄիք» ՍՊԸ	80000	0 %	80000	80000	0 %	80000.00	
	«Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ	165000	0 %	165000	165000	0 %	165000.00	
2	«ԵրՄիք» ՍՊԸ	40000	0 %	40000	40000	0 %	40000.00	
	«Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ	75000	0 %	75000	75000	0 %	75000.00	

Աճուրդն ամփոփվել է 04.03.2024 թվականին: ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-24/6 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) 1-ին և 2-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից Համակարգի կողմից համարվել է «ԵրՄիք» ՍՊԸ –ն (այսուհետ նաև՝ Մասնակից):

7. Տվյալներ՝ էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով Մասնակցի ներկայացրած հայտը, արձանագրեց՝

- «ԵրՄիք» ՍՊԸ-ի հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ՝

Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում՝ /Հավելված 1/ 1)-ին կետում՝ «ԵրՄիք» ՍՊԸ-ն և իրեն (...) բավարարում են «ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-24/6» ծածկագրի փոխարեն նշված է «(^te;der;code^)», ուստի անհրաժեշտ է նշել «ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-24/6»:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ Հանձնաժողովը որոշեց 05.03.2024թ. նիստը կասեցնել՝ առաջարկելով Ընթացակարգի մասնակից «ԵրՄիք» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

8.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 07.03.2024թ. ժամը 15:00-ին, ք. Երևան, Մ.Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

9. Տեղեկություն՝ հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և հայտի գնահատման վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 07.03.2024թ. ժամը 15:00-ին: Հանձնաժողովն արձանագրեց, որ «ԵրՄիք» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց՝ ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-24/6 ծածկագրով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «ԵրՄիք» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժնով գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

10. Տվյալներ՝ ընտրված մասնակցի և մերժված հայտի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

07.03.2024 թ.-ին Հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ «ԵրՄիք» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժնով հայտարարել ընտրված մասնակից, իսկ Ընթացակարգի մյուս մասնակից «Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ-ի հայտը մերժել:

10.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

10.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վարդան Հարությունյան

անդամներ՝ _____ Լևոն Լևոնյան

_____ Վարդան Թորոսյան

_____ Անժելա Լալայան

_____ Լևոն Կուրղինյան

քարտուղար՝ _____ Հերմինե Սաղաթելյան